

« 05 » հունիս 2019 թ No 1476 - Լ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇԻՉ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման հավելված 2-ի 12-րդ կետի 3-րդ ենթակետը, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների տեսակների հստակեցման և կանոնակարգման անհրաժեշտությունից ելնելով.

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային կարգով առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների տեսակների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններին առաջարկել.
  - 1) հիմք ընդունել սույն հրամանի հավելվածով սահմանված ցանկը,

2) ապահովել սույն հրամանի հավելվածով սահմանված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,

3) առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններում սույն հրամանի հավելվածով սահմանված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման անհնարինության դեպքում, ապահովել նշյալ հետազոտությունների իրականացումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում այլ բժշկական հաստատություններում պայմանագրային հիմունքներով:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի տեղադրումն առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2019 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

ՑԱՆԿ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇԻՉ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Կլինիկական հետազոտություններ
  - 1) Միզասեռական քսուքների մանրադիտակային հետազոտություն
  - 2) Կղանքում հելմինթների ձվիկների հայտնաբերում
  - 3) Արյան ընդհանուր հետազոտություն և լեյկոֆորմուլա
    - ա. Հեմոգլոբին
    - բ. Էրիթրոցիտներ
    - դ. Լեյկոցիտներ
    - ե. Էրիթրոցիտների նստեցման արագություն (ԷՆԱ)
    - զ. Լեյկոֆորմուլա
    - է. Թրոմբոցիտներ
    - ը. Արյան մակարդեղիության ժամանակը
  - 4) Մեզի ընդհանուր հետազոտություն
    - ա. Տեսակարար կշիռ
    - բ. Սպիտակուց
    - գ. Գլյուկոզ
    - դ. Կետոնային մարմիններ
  - 5) Կղանքի մանրադիտակային հետազոտություն
2. Կենսաքիմիական հետազոտություններ
  - 1) Գլյուկոզ
  - 2) Ընդհանուր սպիտակուց
  - 3) Ալբումին
  - 4) Միզանյութ

- 5) Կրեատինին
- 6) Ալանինամինոտրանսֆերազ (ALS)
- 7) Ասպարտատամինոտրանսֆերազ (AUS)
- 8) Բիլիռուբին
- 9) Խոլեստերին
- 10) C-ռեակտիվ սպիտակուց
- 11) Ռեմատոիդ գործոն
- 12) Անտիստրեպտոլիզին-O
- 13) Կոագուլոգրամմա
  - ա. Ֆիբրինոգեն
  - բ. Պրոթրոմբինային ինդեքս/ժամանակ
  - գ. ՄՆԳ (միջազգային նորմավորված գործակից)

3. Մանրէաբանական (բակտերիոլոգիական) հետազոտություններ

- 1) Մեզի մանրէաբանական հետազոտություն
- 2) Կղանքի մանրէաբանական հետազոտություն
- 3) Խորխի մանրէաբանական հետազոտություն`
- 4) Խորխի մանրէաբանական հետազոտություն` դեղորայքային զգայունության

որոշումով

- 5) Քսուքների (քթի, կոկորդի, ականջի, աչքի) մանրէաբանական հետազոտություն
- 6) Միզասեռական քսուքների մանրէաբանական հետազոտություն

4. Շճաբանական հետազոտություններ

- 1) Արյան խմբի որոշում
- 2) Ռեզուս գործոնի որոշում
- 4) Ռեակցիա VDRL
- 5) Ռեակցիա MRP
- 6) Վասերմանի ռեակցիա (RW)
- 7) Հեպատիտ «B»-ի հետազոտություն
- 8) Հեպատիտ «C»-ի հետազոտություն
- 9) ՄԻԱՎ-ի իմունաֆերմենտային հետազոտություն` հղիների համար

5. Իմունաբանական հետազոտություն

- 1) Մանտուի փորձ
6. Բակտերիոսկոպիկ հետազոտություններ
  - 1) Խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն
  - 2) Արյան մեջ մակաբույծների բակտերիոսկոպիկ հետազոտություն
7. ՊԱՊ թեստ՝ արգանդի պարանոցի բջջաբանական հետազոտություն
8. Ուլտրաձայնային հետազոտություններ
  - 1) Պտղի ուլտրաձայնային հետազոտություն
  - 2) Որովայնի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
  - 3) Փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
  - 4) Վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն
  - 5) Կրծքագեղձերի ուլտրաձայնային հետազոտություն
9. Ռենտգենաբանական հետազոտություններ
  - 1) Ռենտգենոգրաֆիա
  - 2) Ռենտգենոսկոպիա
10. Ֆլյուորոգրաֆիկ հետազոտություն
11. Ֆունկցիոնալ ախտորոշիչ հետազոտություններ
  - 1) Էլեկտրասրտագրություն
  - 2) Սպիրոգրաֆիա